ՆՅՈՒԹԵՐ ՊԵՐՃ ՊՈՌՇՅԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Պ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

Ստորև հրատարակվող նյութերը տարիներ առաջ հայտաբերված են Մատենադարանի վավերագրերի բաժնում (Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 209, գործ 15, վավերագիր 65) և Լենինգրադի մարդի պետական պատմական դիվանում (հավաքածու № 1754, ցուցակ 1, գործ 1014, թերթեր 5ա-բ, 10—11ա, 24ա-բ) և գալիս են լրացնելու հայ ականավոր գրողի տագնապներով հարուստ կյանքի տարեգրության բաց մնացած էջերը։

Նամակներից առաջինը, որը գրության ժամանակով էլ ամենահինն է, ցուցադրում է Պոռշյանի անսպառ հետաքրքրությունը հայրենի հնություններին նկատմամբ։

Հաջորդ երեք նամակները նվիրված են միևնույն խնդրին։ Դրանցում ունկնդիր ենք լինում հայ գրականության վաստակաշատ մշակի սրտակեզեզ աղերսանքներին, արված ազգային հաստատություններից մեկին՝ ս. Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհրդին, գավակների կրթությունը կանոնավոր հունի մեջ դնելու համար նյութական միջոցներ ձեռք բերելու ակնկալիքով, որպեսզի գեթ մասամբ կարողանար կատարած լինել որդիների հանդեպ իր հայրական պարտքը։

Հիշյալ նամակները ցնցող վավերագրեր են և ողջ մերկությամբ ի ցույց են հանում իր գրական ու հանրային գործունեության ժամանակամիջոցում մտավոր ու մարմնական ուժերն առանց մնացորդի ազգին նվիրած և դաժան իրականության պատճառով անապահով մնացած տաղանդավոր գրողի ողբերգական կացությունը։

Որովհետև այդ նամակների գլխավոր առանցքը Պոռշյանի ավագ որդու՝ Պոռշ Պոռշյանի (1883—1918) և կրտսեր դստեր՝ Շուշանիկի ուսման հարցն է, նկատենք, որ Շուշանիկին այնպես էլ չհաջողվեց բժշկական մասնագիտություն ձեռք բերել։ Հետագայում նա ստիպված էր պարապել մանկավարժությամբ։ Իսկ Պոռշ Պոռշյանը դեռ ուսանողական տարիներից կլանվեց Ռուսաստանի քաղաքական կյանքով, սոցիալիզմի ու հեղափոխության գաղափարներով, աքսորվեց Սիբիր, եղավ վտարանդի, ավելի ուշ դարձավ ձախ-էսեռների պարագլուխներից մեկը, իսկ Հոկտեմբերի հաղթանակից հետո անցավ Սովետական Ռուսաստանի կողմը և Վ. Ի. Լենինի գլխավորած ժողկոմխորհի մեջ հանձն առավ փոստի և հեռագրի ժողկոմի, նաև բարձրագույն ռազմական խորհրդի կոմիսարի պատասխանատու պաշտոնները։

Նրա մահվան առիթով է Վ. Ի. Լենինը «Պրավդայի» 1918 թ. դեկտեմբերի 20-ի համարում գրել. «Պոռշյանն անմիջապես աչքի էր ընկնում հեղափոխության և սոցիալիզմի նկատմամբ խոր նվիրվածությամբ։ Բոլոր ձախ-էսեռների մասին չէ, որ կարելի էր ասել, թե նրանք սոցիալիստներ են, նույնիսկ, թերևս, նրանց մեծամասնության մասին այդ չէր կարելի ասել։ Բայց Պոռշյանի մասին այդ պետք էր ասել, որովհետև, չնայած նրա հավատարմությանը ռուս նարոդնիկների գաղափարախոսությանը, ո՞չ-սոցիալիստական գաղափարախոսությանը, ի դեմս Պոռշյանի երևում էր խորապես համոզված սոցիալիստ։ Այդ մարդը յուրովի, ո՞չ թե մարքսիզմի միջոցով, ո՞չ թե պրոլետարիատի դասակարգային պայքարի գաղափարներից, դարձավ սոցիալիստ...» (Վ. Ի. Լենին. Երկեր, հ. 36, էջ 578)։

Հինգերորդ գրությունը (քաղված է նույն դիվանի նույն գործից, թ. 25) Պոռշյանի մահը գուժող մի հնօրյա վավերագիր է և մեջտեղ է հանում ճակատագրի մի տխուր խաղ։ Չգիտես ինչով բացատրել, որ այն խորհուրդը, որը երկու տարի առաջ մերժում էր պատկառելի վիպասանի համեստ խնդիրքը, հիմա նրա գերեզմանին թանկարժեք պսակ դնելու հանձնարարություն էր տալիս։

Վերջին նամակը ամբողջական վիճակով գոյություն չունի։ Այն մենք վերականգնել ենք ըստ Ն. Տեր-Կարապետյանի «Խաչատուր Աբովյան» գրքի տարբեր էջերում մեջ բերված քաղվածքների, որոնք առանձին վերցրած՝ խիստ ուշագրավ են և լրացնում են հայ մեծ լուսավորչի մասին Պոռշյանի թողած հուշագրական դրվագները։

1

1ա

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ԳԷՈՐԳԱՅ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Ի պաշտօնակատարէ թեմական վերատեսչին Երևանայ և Կարուց

ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ի շրջագայելն իմ պաշտօնական գործով ի վիճակին Սուրմալուոյ՝ գտի ի գեղջն Թէջիրլու յարկեզ աւետարանի միոյ զփոքրիկ զայս սրուակ խաւար-ապակեայ հնադարեան, զոր ընդ այսմ պատիւ ունիմ մատուցանել յոտսդ Վեհափառութեանդ, որպէս իր արժանայիշատակ, յոր, որպէս եռ կարծեմ, նախնիք մեր յանդրքրիստոնէական դարս հեղուին զարտօսրաչաց և ամրապնդեալ զբերանն՝ իբրև ի նշան եռանդագին սիրոյ՝ թաղէին ընդ մերձաւոր ննջեցեալս իւրեանց։

Եթէ ճշմարտանման թուիցին կարծիք իմ, ապա լաւ էր, զի սրբազնաւուրբ Հայրդ պատուէր հրամանի տայիք դնել ի թանգարանին հիմնեցելոյ ի մեծագործ Տեառնէդ յապագայ յետախուզութիւն հնասիրուց։

ՊԵՐՃ ՊՈՒՇԵԱՆՑ

№ 845, ի 25-ն մարտի, 1882 ամի
Ի Վաղարշապատ
<Մակագրություն> Ստացեալ յ30-ն մարտի 1882

2ա

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏԿԱՌԵԼԻ ԽՈՐՀՐԴԻՆ[1]

Երկու ամիս և կես անց է ահա, որ ես Խորհրդիդ վերջնական տնօրենության համաձայն երկու զավակներիս ապահովությունը Խորհրդիդ շնորհիվ վախճանապես տնօրինված համարելով, ստացա վարչությունից ինձ համար որոշած 300 ռուբլի ճանապարհածախքը և ուղևորվեցի Թիֆլիս։

Սակայն ի մեծ ցավ սրտիս, ինչպես դստերս և տղայիս գրություններից երևում է, նոցանից ոչ մինը և ոչ մյուսը ցարդ ոչինչ չեն ստացել Խորհրդիդ իրանց համար որոշած ամսահասույթից։

2բ Բարվոք էր, որ հեռատես գտնվելով՝ ստացածս ճանապարհածախքից ըստ կարելույն բաժին հանեցի մեկին և մյուսին, այլապես՝ տղայիս անհնար պիտի լիներ Նոր Նախիջևանից որոշած 20 ռուբլի ամսականով սնունդ, բնակարան ունենալ։ Թողում ասել համալսարանի երկրորդ կիսամյակի վճարը, որ մինչև օրս չէ վճարած, իսկ դստերս պիտի վիճակվեր փողոցում մնալ անտեր ու անխնամ, արտաքսվելով միանգամայն ուսումնառությունից, եթե տիկին Վոնգլը շնորհ չաներ մինչև այսօր սպասելու։

Խոնարհաբար խնդրում եմ պատկառելի Խորհրդիդ վազընդփույթ և անհետաձգելի տնօրենությունը, մինչ դեռ ուշ չէ։

2գ Մեծապես պարտավորած կլինեիք, եթե մխիթարական հեռագրով ծերությունս ամոքեիք[2]։

ՊԵՐՃ ՊՈՒՇՅԱՆՑ

Հասցես. Թիֆլիս, Вознесенская. 19.
<1904, փետրվար>

<Մակագրություններ>

Պռոշյանց Պռոշ։ Հայոց եկեղեցիների խորհուրդ Ս. Պետերբուրգում։ Ստացվել է՝ 21 փետրվարի 1904 թ., № 155։ Զեկուցվել է՝ մարտի 2-ին։ Տեղեկանք. Որդուն <տրամ է> ուղարկված Օդեսա՝ ուսման իրավունքի և թոշակի համար, ս. թ. հունվար 1-ից մինչև հուլիսի 1-ը։ Գրագիր՝ Շատվորյան։

10ա 8-ն օգոստոսի 1904, Մեծ-Ղարաքիլիսա

ՄԵԾԱՐԳՈ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ

Անցյալ նոյեմբերին, ուշ լինելու պատճառավ իմ դստերս՝ Շուշանիկ Պռոշյանցին, կանանց բժշկական ինստիտուտում չընդունելու առթիվ, չհաջողվեց նմանապես, իբրև հաստատուն աշակերտուհի, շարունակելու և ատամնաբուժական դպրոցում, ուստի սա ստիպվեց մինչև ներկա ուսումնական տարվա սկիզբը վերադառնալ տուն, և գոլով որդեգրուհի Խորհրդիդ,
10բ *վարչությանդ հաճությամբ յոթանասուն և հինգ ռուբլի որոշած ճանապարհածախքից 30 ռուբլի ստանալ տուն վերադառնալու, իսկ մնացած 25 ռուբլին թողնելու՝ Պետերբուրգ վերադարձի համար։*

Եվ որովհետև մոտ են դպրոցներ մտնելու օրերը, խոնարհաբար խնդրում եմ պատկառելի Խորհրդիդ բարեհաճել հեռագրով փութացնելու ըստ ներքո նշանակյալ հասցեի մնացած 25 ռուբլին, որպեսզի աղջիկս ուշանալով չըզրկվի անցյալ տարվա պես ուսումից։

ՊԵՐՃ ՊՌՈՇՅԱՆՑ

Հասցես. Кавказ, Больше Караклис
Перчу Прошяну
д. Вано Егшатова

11ա <Մակագրություններ>
Հայոց եկեղեցիների խորհուրդ Ս. Պետերբուրգում։ Ստացվել է՝ 14 օգոստոսի 1904 թ.։ Զեկուցվել է՝ 28/29 օգոստոսի։ Որոշվել է՝ Առաջել։ Տեղեկանք. *Խորհրդի 1904 թվականի մարտի 2-ի որոշման մեջ ասված է. «Շուշանիկ Պռոշյանցին տալ 50 ռուբ. ճանապարհածախս՝ դեպի Տփղիս, իրավունք վերապահելով նրան թոշակից օգտվելու 1904 թ. սեպտեմբերից և այն դեպքում, եթե նա մտնի բժշկական ինստիտուտ։ Վերադառնալու համար նրան կարելի կլինի տալ 25 ռուբլի։ Գրագիր՝* Շատվորյան:

4

24ա *ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏԿԱՌԵԼԻ ԽՈՐՀՐԴԻՆ*
ՎՃՏԱԿՈԾ ՊԵՐՃ ՊՌՈՇՅԱՆՑԻՑ

Խնդիր

Իմ դուստր Շուշանիկը երկու տարի է համարվում է Խորհրդիդ թոշակառու-որդեգրուհի, սակայն աննպաստ հանգամանքները, գուցե և թյուրիմացությունները արգելք հանդիսացան սրա կանոնավոր ուսմանը։ Առաջին տարին Վոնդլի ատամնաբուժական դպրոցի երկրորդ կիսամեկի վարձը չհատուցվելը ստիպեց սրան թողնել ուսումը և Խորհրդիցդ յոթա-

նասուն և հինգ ռուբլի երթևեկության ճանապարհածախք ստանալ և տուն վերադառնալ, երկրորդ ուսումնական տարվա սկզբից ուսումը կանոնավորապես շարունակելու մտադրությամբ։

Դժբախտաբար այդ չհաջողվեց, Վոնգլի դպրոցը յուր վեցամսյա վճարքը չստանալու համար սեպտեմբերին նորից չընդունեց աղջկանս, զանազան բարձրագույն կուրսերի դռներ փակվեցան առաջին, արտասահման գնալու սրա տված խնդիրը Խորհրդիդ կողմից մերժվեց, այնինչ, կարծեմ, առաջին օրինակը չէր լինելու, և խեղճ դուստրս երկու և կես ամիս անապատան, անխնամ և անգործ թափառելուց հետո Ռուսիայի հեռավոր մայրաքաղաքում, նոյեմբերի կեսից միայն մեծ դժվարությամբ մուտք գտավ Պաշուտինի ատամնաբուժական դպրոցում և նույն ամսի 20-ից սկսեց ստանալ Խորհրդիցդ որոշված 25 ռուբլի ամսական հասույթը։

Անհաջողությունը և այդքանը շատ համ·սրեց. անբախտ դստերս մահամերձ մոր վերջին օրհնությանն արժանանալու բնական փափագը՝ մեռնողի ցանկությամբ՝ փետրվարի կեսին շտապեցրեց սրան տուն, բայց, ավա՜զ, խղճուկս մոր սառը դիակը համբուրելով միայն շատացավ[3]։

Հետևաբար և այս տարի դուստրս զրկվեց ուսումից. երկու ամիս ու կես միայն պարապելով՝ անկարելի էր ողջ տարվան քննությունը տալ։

Խոնարհաբար խնդրեմ պատկառելի Խորհրդիցդ հարգել Շուշանիկ դստերս անցյալ 1904 թվի աշնանը Խորհրդիդ մատուցած և մերժված խնդիրը, սրա ապրուստի համար հատկացրած տարեկան 300 ռուբլի դու-
24բ մարին ավելացնել ուսման վարձի համար որոշված երկու հարյուր ռուբլին և հինգ հարյուր ռուբլի տարեկանով ապահովացնել արտասահմանում Զվիցերիայի Բերն քաղաքում Շուշանիկ դստերս բժշկականության ուսումը և ապրուստը։

Հուսամ, թե պատկառելի Խորհուրդդ չի մերժել հիսուն բոլորակ տարիներ հայ գրականության և մանկավարժության ասպարիզում կյանք մաշած և ծերության օրերում անապատան բարձիթողի լքված, վշտաբեկ հոր խոնարհ խնդիրը, փութացնելով սրա որոշումը, շտապելու և ամառս լեզուներով պարապելու ու սեպտեմբերին համալսարան մտնելու համար։

Վշտացյալ ՊԵՐՃ ՊՈՌՇՅԱՆՑ

10 մարտի 1905
Թ ի ֆ լ ի ս

<Մակագրություններ>
Հայոց եկեղեցիների խորհուրդ ս. Պետերբուրգում։ Ստացվել է՝ 18 մարտի 1905 թ., № 267։ Զեկուցվել է՝ 23/24 մարտի. հեռագրվել է։ Զեկուցվել է՝ 30 մարտի 1905 թ.։ Ձայների մեծամասնությամբ մերժվել։ Մասնավոր կարգով խնդրել Խորհրդի անդամ Ադոնցին՝ պատասխանելու[4]։

25ա 25 ноября 1907 г., 5 ч. 55 м. Тифлис, № 13665
Петербург
Армянский церковный совет, копия: Адонцу
Спросить Невский 42

Прошян скончался[5], похороны в воскресенье второго декабря
Распорядительный комитет
Адрес: Нерсисян семинария

Пометы: Совет армянских церковей в Петербурге.
Получено 27 ноября 1907 г., № 776.
28/IX: Просить Ал. Мелик-Азарьянца, быть представителем и поручить возложить венок до пятьдесят рублей.
(Подпись)

Հատվածներ Պերճ Պողոյանի՝ Ն. Տեր-Կարապետյանին ուղղված նամակից[6]

<1893—1894 թթ.>

109 *...Որքան հիշում եմ Աբովյանցը միջին հասակով, սպիտակադեմ գեղեցիկ մի երիտասարդ էր, նմանվում էր յուր Վարդանին, բայց ոչ նրա պես հաստ և գեր (շատ էլ հաստ չէ<ր>). շատ դյուրաշարժ և ճարպիկ էր, սրախոս էր և քաղցրաբարո։*

88 *Դիպվածով թե գերմանացիների հետ մոտ լինելու հարգելի պատճառով նա բնակվելիս է եղել «Նեմեցի կոլոնիա» կոչված թաղումը, ինչպես երևում է այստեղ է ծանոթացել իր գերմանուհի կնոջ հետ և ամուսնացել։*

96 *Նրա քաղցր վարմունքի և ջերմ ազգասիրության համար խոսում են Թիֆլիզում ունեցած իր մասնավոր դպրոցի աշակերտները, մի (հայագետ) վրացի գնդապետ Բագրատձե շատ քաղցր հիշողություններ է պահել Աբովյանին աշակերտած ժամանակից. նրա ասությամբ աշակերտներ չեն եղել իրենք, այլ սիրելի զավակներ, լավ օրերին ճաշերից հետո միշտ տանում է եղել դաշտ զբոսանքի. Բագրատձեն չի մոռանում այն գրկախառնությունը, որ ունեցել են բոլոր աշակերտներն իրենց սիրելի ուսուցչի հետ՝ Թիֆլիզից Երևան պաշտոնով հրաժեշտ տալու օրը. բոլոր աշակերտները մի քանի վերստ ուղի են դրել Աբովյանին։*

114 *Աբովյանի անհայտանալու մասին զանազան ենթադրություններ կան, ոմանք քաղաքական միտումների են վերագրում, այլք Թուրքերի վրիժառության հետևանք են ասում, իբրև թե պարսիկ խաների կանանց հետ ունեցած հարաբերության համար, նրանցից խեղդվել և անհայտացել է... Ասում են, որ գլխարկը, կոշիկի մի հատը, սերթուկը գտել են Զանդուի ափին. բայց այս ամենը բերանացի տարածված լուրեր են, հաստատ ոչինչ չկա. ոմանք էլ իբրև կնոջից լսած, ասում են թե նա կորչելու նախընթաց երեկոյին շատ մտախոհ է եղել, ոչ ոքի հետ չի խոսացել, վաղ երեկոյից մինչև ուշ գիշերը, մինչև ժամի չորսը շարունակ գրել է, առանց ուշադրության առնելու կնոջ խնդրվածները՝ վեր կենալ և պառկել։*

Առավոտադեմ իբրև թե կնոջ քունը տանում է, մեկ էլ աչքերը բաց է անում և գտնում է ամուսինը կորած։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Որովհետև անցյալում փոստային առաքումները Տփղիսից Պետերբուրգ էին հասնում շուրջ տասն օրում, հետևաբար Պ. Պողոյանի սույն նամակը գրված պետք է լինի 1904 թ. փետրվարի 10-ից ոչ առաջ։

2. Նույն մարտի 2-ին խորհուրդն ստանում և քննում է նաև Շուշանիկ Պողոյանի ստորև բերվող դիմումը (պահվում է հոր նամակին կից, թ. 6ա-բ) և որոշում է տալ 50 ռուբ. ճանապարհախաս, ամառը տուն գնալու համար, նաև իրավունք վերապահելով՝ թոշակից օգտվելու սեպտեմբերից սկսած և այն դեպքում միայն, եթե ընդունվի բժշկական ինստիտուտ, մի բան, որ հետաքրքրում անկարելի է լինում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

Խոնարհաբար խնդիր

Վոնգլ-Սվիդիրսկու ատամնաբուժական դպրոցի
առաջին բաժանման ուսանողուհի
Շուշանիկ Պռոշյանից

Դեկտեմբեր ամսի (1903 թ.) վերջին նիստին հարգո եկեղեցական խորհուրդդ վճռեց ինձ, իբր աշակերտուհու Վոնգլ-Սվիդիրսկու դպրոցի, հասցնել 200 ռ. ուսման վարձ և 25 ռ. ամսական թոշակ ապրուստի համար։ Ներկա հունվարի 1904 թ. ես խնդիր տվի հարգո խորհրդդդ ի կատար անել դեկտեմբերի վճիռը, խոստանալով մնալ վերոհիշյալ դպրոցում մինչև ուսմանս լիս.կատար ավարտելը։ Խորհուրդդ իրենից անկախ պատճառներով չկարողացավ հասցնել ինձ իմ հասանելիք թոշակս և ուսման վարձը։ Ավելորդ համարելով այստեղ անցկացնել երեք մնացած ամիսները, ես խոնարհաբար խնդրում եմ եկեղեցական հարգո խորհրդդդ, միշոց տալ վերադառնալ հայրենիք՝ Տփխիս, հասցնելով 50 ռ. ճանապարհածախս և կարևոր ծախսերիս, հաշվելով այդ հունվար և փետրվար ամիսների թոշակը։ Եթե հարգո խորհուրդը մինչև անգամ այս կիսամյակի ուսման վճարս ցանկանա տալ, և ես նորից ատամնաբուժական դպրոց կարողություն ունենամ հաճախելու, դա եկեղեցո համար ավելորդ ծախս պետք է լինի, որովհետև աշնան միևնույն դասընթացքը նորից պետք է սկսեմ։

Չկամենալով ավելորդ ծանրություն բառնալ խորհրդդդ գանձի վերա և միևնույն ժամանակ նպատակիս հասած լինել, ես խոնարհաբար խնդրում եմ ինձ իրավունք տալ աշունքին բժշկական ինստիտուտ մտնել և թոշակս պահպանել։ Իսկ եթե ինձ չհաջողվեց մտնել ինստիտուտ ես կմնամ ատամնաբուժական դպրոցում և տված խոսքիս հաստատ մնալով, կավարտեմ ուսումս այդ դպրոցում։

Թույլ չտալով մինչ աշունք ինձ նշանակած թոշակիցս օգտվելու, ես խոնարհաբար խնդրում եմ հարգո խորհրդդդ չմերժել ինձ նշանակել նաև վերադարձիս համար ճանապարհածախս, քանի որ ես միշոցներից բոլորովին զուրկ եմ։

Պետերբուրգ ՇՈՒՇԱՆԻԿ ՊՌՈՇՅԱՆՑ
1904 թ. մարտի 2-ին

3. Պ. Պռոշյանի կինը՝ Աննա Դոլգյանը, մոր (Շուշան) կողմից Սայաթ-Նովայի ժառանգներից էր և ծնվել էր Ղզլտրում, 1853 թվականին։

4. Թե Նիկողայոս Ադոնցը ի՞նչ է գրել և ինչպես պատճառաբանել, հայտնի չէ։

5. Պ. Պռոշյանը վախճանվել է 1907 թ. նոյեմբերի 23-ին, Բաքվում։

6. Հրատարակվող հատվածները Աբովյանի առաջին կենսագիրներից մեկին՝ Ներսես Տեր Կարապետյանին Պերճ Պռոշյանի հղած ընդարձակ նամակից են, որի ամբողջական բնագիրը մեզ մատչելի չի եղել։ Թեպետ գրավոր և կարող անձանց միշոցով երկիցս դիմել ենք Ն. Տեր Կարապետյանի՝ Բաքվում բնակվող ժառանգներին՝ Պռոշյանի նամակն ստանալու կամ նրա հետագա բախտի մասին որևէ բան իմանալու հույսով, սակայն արդյունքի չենք հասել։ Գիտենք այնքան, որ նամակը գրված է եղել 1893 թ. աշնանը, կամ 1894 թ. առաջին ամիսներին, և հասցեատիրոջ ասելով՝ «Հարգելի վիպագիրը ուրախություն հայտնելով», որ նա ճեմարանական ավարտական շարադրության նյութ է ընտրել «Խաչատուր Աբովյան և նրա «Վերք Հայաստանին», հաղորդել է Աբովյանի մասին «յուր իմացած տեղեկություններն» (տե՛ս Ն. Տեր Կարապետյան, Խաչատուր Աբովյան, Տփղիս, 1897, էջ Ա)։

МАТЕРИАЛЫ К БИОГРАФИИ П. ПРОШЯНА

П. О. АКОПЯН
Доктор филологических наук

Резюме

Эпистолярное наследие Прошяна до настоящего времени полностью не опубликовано. Исследователям было известно более 30-тн писем. В настоящее время впервые издается 6 писем писателя, характеризующие его как собирателя древних памятников материальной культуры армян. Письма свидетельствуют о трудностях, перенесенных автором.

Впервые публикуется телеграмма, извещающая о кончине писателя.

Наконец, с помощью опубликованных материалов, частично восстанавливается важное письмо Прошяна, содержащее отрывки из воспоминаний об Абовянэ.